

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ*

Տաթև Զորյան

Բանալի բառեր՝ Եվրոպական Միություն, Հարավային Կովկաս, ռազմավարական շահ, երկկողմ հարաբերություններ, քաղաքական ճգնաժամ, փափուկ ուժ:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասի համար ստեղծվեց անորոշության մի երկարատև ժամանակաշրջան: Իրենց անկայիտության առաջին տասնամյակում տարածաշրջանի նորանկախ երկրները գտնվում էին քաղաքական ու սոցիալական անկայուն վիճակում՝ զուգորդված թույլ զարգացած ժողովրդավարական համակարգերով: Պետական կառույցների և ինստիտուտների ձևավորման և կոնսոլիդացիայի գործընթացն ուղեկցվում էր տարածաշրջանի անվտանգությանը սպառնացող մարտահրավերներով և էթնիկ ու անջատողական հակամարտություններով:

Խորհրդային Միության անկումից հետո Հարավային Կովկասը դարձավ տարածաշրջանային (Ռուսաստան, Իրան, Թուրքիա) և արտատարածաշրջանային (Միացյալ Նահանգներ, Եվրոպական Միություն, ՆԱՏՕ, Չինաստան, Կենտրոնական Ասիայի երկրներ, արաբական պետություններ) շահերի բախման թատերաբեմ: Դա բնութագրվում էր որպես ջրային տարածքների և Սև ու Կասպից ծովերի ռեսուրսների նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար մղվող պայքար, մասնավորապես այն պատճառով, որ Հարավային Կովկասը համարվում էր կարևոր տարանցիկ երթուղի էներգետիկ ռեսուրսների տեղափոխման համար (Կենտրոնական Ասիայից և Մերձավոր Արևելքից դեպի Եվրոպա):

Այս շրջանում Եվրոպական Միությունը Հարավային Կովկասը դիտարկում էր որպես բազմաթիվ խնդիրներով մի «էկզոտիկ» տարածաշրջան, որն աշխարհագրական առումով հեռու էր Եվրոպայից: Սա էր պատճառը, որ տարածաշրջանի նկատմամբ ԵՄ-ի հետաքրքրությունը մեծ չէր: Հարավային Կովկասի նկատմամբ ԵՄ-ի վարած պասիվ քաղաքականությունը պայմանավորված էր նաև արտաքին և ներքին մի շարք այլ գործոններով, որոնց թվում էին անլուծելի համարվող բարդ ռեգիոնալ խնդիրները, տարածաշրջանի մասին խորքային տեղեկատվության պակասը, Միության ներսում Հարավային Կովկասի նկատմամբ հետաքրքրությունը խթանող պրոպագանդայի բացակայությունը, տարածաշրջանում արտաքին դերակատարների գերիշխող ներկայությունը, ԵՄ-ի առջև ծառայած տնտեսական հիմնախնդիրները և հատկապես Բալկաններում տիրող իրավիճակը, որն այդ շրջանում ԵՄ-ի հիմնական մտահոգությունն էր: Այնուհանդերձ, երբ տարածաշրջանի երկրներում սկսվեց դեպի շուկայական տնտեսության և ժողովրդավարության անցման գործընթացը, և երբ տարածքային կոնֆլիկտներն ու նավթային գործոնը սկսեցին դերակատարում ունենալ Հարավային Կովկասի քաղաքական կյանքում, ԵՄ-ն մեծացրեց իր ակտիվությունը՝ տարածաշրջանին ցուցաբերելով մոտ մեկ միլիարդ դոլարի մարդասիրական և տեխնիկական օժանդակություն մի շարք ծրագրերի շրջանակներում[1]:

Հարկ է նշել, որ Եվրոպական Միության ընդհանուր արտաքին և անվտանգային

* Հոդվածն ընդունվել է 30.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

քաղաքականության բացակայության հիմնահարցը տևական ժամանակ քաղաքական ու փորձագիտական շրջանակների մտահոգության առարկան էր: Լիսաբոնի պայմանագրի կնքումից հետո, սակայն, նկատվեց որոշակի դրական տեղաշարժ ԵՄ-ի արտաքին և էներգետիկ քաղաքականության զարգացման առումով, որի դրսևորում կարելի է համարել վերջինիս ռազմավարությունը Հարավային Կովկասում: Եվրոպական երկրների հարաբերությունները Հարավային Կովկասի հետ ունեցել են բավականին հետաքրքիր էվոլյուցիա: Այս հարաբերությունների մեկնակետը դրվել է նախքան ԽՍՀՄ փլուզումը՝ 80-ականների վերջերին՝ պայմանավորված էթնիկ հակամարտությունների խորացմամբ: Եվրոպական երկրներում հայկական սփյուռքը մեծապես նպաստել է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դրական իմիջի ձևավորմանը: Սակայն, նախքան ԽՍՀՄ փլուզումը և դրանից որոշ ժամանակ անց, ԵՄ-ի ռազմավարությունը Հարավային Կովկասի նկատմամբ էական փոփոխությունների չի ենթարկվել:

Հարավային Կովկասի երկրներն իրականացնում են բազմակետորարտաքին քաղաքականություն՝ իրենց ինտեգրման ուղին կապելով հաճախ իրար հակասող դաշինքների, կազմակերպությունների և ծրագրերի հետ: Տարածաշրջանի երկրներից Վրաստանն ու Ադրբեյջանը «ժողովրդավարության և տնտեսական համագործակցության կազմակերպության» (ՎՌՈԱՄ) անդամներ են, մինչդեռ Հայաստանը՝ պրոռուսական «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության» (ՀԱՊԿ) անդամ է[2]: Հայաստանն ու Ադրբեյջանը նաև «Անկախ Պետությունների Համագործակցության» (ԱՊՀ) անդամ են, իսկ Վրաստանը 2008թ. ռուս-վրացական պատերազմից հետո դուրս եկավ կառույցի կազմից:

Հարավային Կովկասում միջազգային հարաբերությունների խորացման համար լրացուցիչ խոչընդոտ են առկա տարածաշրջանային հակամարտությունները և մի շարք անկախ, չճանաչված պետությունների (Հարավային Օսեթիա, Աբխազիա, ԼՂՀ) առկայությունը: Եվրոպան 1992թ-ից ի վեր ակտիվորեն մասնակցում է մշակված հակամարտությունների կարգավորման գործընթացին: Գերմանիան, Իտալիան, Ֆրանսիան հենց սկզբից ներգրավվեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակների մեջ: 1997 թվականից Ֆրանսիան դարձավ Մինսկի խմբի համանախագահող երկիր: Ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև Ֆինլանդիան և Շվեդիան:

Հարավային Կովկասում ԵՄ-ի քաղաքականության կոնստիտուցիոնալ հիմքերը դրվեցին 1993-94թթ[3]: Մասնավորապես 1993թ. Բրյուսելում սկիզբ առավ «Եվրոպա-Կովկաս-Ասիա» տրանսպորտային միջանցքի ծրագիրը (TRACECA), որի մասն էր կազմում մեկ այլ հայտնի ծրագիր՝ «Տեխնիկական աջակցություն անկախ պետությունների համագործակցությանը» (TACIS): Հարավկովկասյան երեք երկրները ներգրավվեցին ծրագրի շրջանակների մեջ: Արդեն այդ ժամանակվանից հայտնի դարձավ Հարավային Կովկասի նկատմամբ ԵՄ-ի ռազմավարության հիմնական նպատակը. այն է՝ Ռուսաստանը շրջանցող միջանցքի ստեղծում՝ նպատակ ունենալով դիվերսիֆիկացնել կենտրոնացված առևտրի և տրանսպորտի ավանդական ուղիները և ձևավորել դեպի Եվրոպա գնացող այլընտրանքային ուղիներ[4]:

1994-1995թթ. Եվրոպական հանձնաժողովը մշակեց և Եվրոպական Պառլամենտին ու Խորհուրդին ներկայացրեց «Հարաբերություններ կովկասյան հանրապետությունների հետ» անունը կրող փաստաթուղթը, որը, ըստ էության, ԵՄ-ի հարավկովկասյան ռազմավարությունն էր: Փաստաթղթում ընդհանուր ռազմավարության մշակումը հիմնավորվում էր էներգետիկ շահերով: Հենց այս շրջանում էլ սկսում են ձևավորվել ակտիվ հարաբերություններ ԵՄ-ի և տարածաշրջանի երկրների միջև: 1996թ. Հարավային Կովկասի երեք երկրների հետ ստորագրվում է «Գործընկերության և համագործակցության համա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ծայնագիրը», որն ուժի մեջ է մտնում 1999թ-ից[5]: Այդ ժամանակից ի վեր ԵՄ-ի քաղաքականությունը զարգանում է երկու ուղղություններով.

1. Փոխգործակցություն ազգային պետությունների հետ:

2. Տարածաշրջանն ընդգրկող համապարփակ ռազմավարության ձևավորման փորձեր:

Երկրորդ հարաբերությունների զարգացման առումով կարևոր էր 2003թ. Հարավային Կովկասում ԵՄ-ի հատուկ ներկայացուցչի պաշտոնի ներդրումը: Այն առաջին անգամ ստանձնեց Ռուսաստանում Ֆինլանդիայի նախկին դեսպան, Մինսկի խմբում Ֆինլանդիայի ներկայացուցիչ Հելկե Թալվիտին [6]:

Հարավային Կովկասի երկրների ներառումը «Եվրոպական հարևանության քաղաքականության» ծրագրի մեջ 2003թ-ին, հաստատում էր Եվրոպական Միության պատրաստակամությունը երկրորդ հարաբերությունների խորացման առումով: ԵՀԶ-ն մի գործիք է, որը ներառում է Միության համագործակցային ծրագրերը և ընդգրկում այն երկրները, որոնք աշխարհագրորեն գտնվում են Եվրոպայում կամ վերջինիս սերտ հարևանությամբ, սակայն չունեն շոշափելի ապագայում ԵՄ-ին անդամակցելու հեռանկարներ: Այս ծրագրով ԵՄ-ն իր հարևաններին առաջարկում է արտոնյալ հարաբերություններ՝ հիմնված փոխադարձ հանձնառության և համընդհանուր արժեքների վրա՝ ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, օրենքի գերակայություն, շուկայական տնտեսության սկզբունքներ, կայուն զարգացում: ԵՀԶ-ի ռազմավարական նպատակները հարավկովկասյան երեք երկրների նկատմամբ ընդհանուր առմամբ նույնն են, ինչ մյուս երկրների դեպքում: Ծրագրի նպատակն է կանխել նոր բաժանարար գծերի առաջացումը Եվրոպայում՝ հարևան երկրներին առաջարկելով քաղաքական, տնտեսական, մշակութային և անվտանգային սերտ համագործակցություն: 2006թ. քննարկվեցին և ընդունվեցին «Գործողությունների պլաններ» երեք երկրների հետ՝ ԵՀԶ-ի շրջանակներում: Բարեփոխումների դիմաց ԵՄ-ն խոստանում էր համապարփակ տնտեսական ինտեգրում և քաղաքական երկխոսություն՝ հարավկովկասյան երկրների հետ հարաբերություններում հանդես գալով որպես նորմատիվ ուժ:

Գործողությունների պլանի սկզբունքները երեք երկրների դեպքում գրեթե նույն էին և վերաբերում էին հետևյալ հիմնահարցերին[7].

- Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքեր.

- Ժողովրդավարության ամրապնդում՝ միջազգային պահանջներին համահունչ արդար և թափանցիկ ընտրական գործընթացների միջոցով.

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում՝ ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում.

- Օրենքի գերակայության ամրապնդում՝ դատաիրավական համակարգի բարեփոխումների, խարդախության և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցով.

- Տնտեսական զարգացմանը, աղքատության կրճատմանը և սոցիալական հանախմբվածությանն ուղղված ջանքեր.

- Արդարադատության, անվտանգության և սահմանային կառավարման ոլորտում համագործակցության խորացում:

Չնայած ակնկալվում էր, որ կարճ ժամանակում ԵՀԶ-ն կարող է հանդես գալ որպես վերափոխող գործիք տարածաշրջանում կայունության, անվտանգության, ժողովրդավարության և համագործակցության ապահովման առումով (Արևմտյան Բալկանների օրինակով), սակայն մինչ օրս այդ ուղղությամբ շոշափելի արդյունքներ չեն արձանագրվել:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ԵՄ-ի ռազմավարությունը Հարավային Կովկասում 1992-2004թթ. կարելի է բնորոշել «տատանվող մերձեցման տասնամյակ» անունով: Տարածաշրջանի երկրներն զբաղված էին իրենց առջև ծառայած կենսական խնդիրների լուծմամբ և շատ թույլ էին ԵՄ-ի հետ համագործակցությունից օգուտներ քաղելու համար, իսկ Միությունը չափազանց զբաղված էր Բալկանյան հիմնախնդրով: Այս շրջանում ԵՄ-ն չունեի հետևողական միասնական ռազմավարություն տարածաշրջանի նկատմամբ, ուստի 90-ականներն ավելի շուտ կարելի է բնորոշել տարածաշրջանում Միացյալ Նահանգների, քան ԵՄ-ի ակտիվության փուլ: Այս շրջանում զգալի էր նաև տարածաշրջանի անվտանգության հարցերին եվրոպական միջամտությունը, քանզի ԱՄՆ-ի և Ռուսաստանի դոմինանտ ուժի պարագայում ԵՄ-ն պատրաստ էր որոշիչ գործոն դառնալ և կանխել տարածաշրջանին սպառնացող բացասական միտումները: ԵՄ-ի ռազմավարությունը հարաբերությունների առաջին տասնամյակում ունեցել է հետևյալ էվոլյուցիան.

Տարածաշրջանի «հետխորհրդային» սուբյեկտիվ ընկալման փուլից անցում դեպի երեք երկրների հետ տարբերակված ռազմավարական հարաբերությունների հաստատման փուլ.

- Տեխնիկական աջակցության ծրագրերի փուլից անցում տնտեսական ու քաղաքական ինտեգրման փուլի՝ եվրոպական համագործակցային ծրագրերի միջոցով.

- Տարբերակված անհատական մոտեցումներ Հյուսիսային և Հարավային Կովկասի, Կենտրոնական Ասիայի նկատմամբ,

- Հրաժարում «նախ Ռուսաստանը» մոտեցումից, տարածաշրջանից այլ խաղացողներին դուրս մղելու ցանկության ամրապնդում.

- Էներգամատակարարման և քաղաքական ազդեցության տարածման այլընտրանքային ուղիների որոնում:

2008թ. տարածաշրջանում ստեղծվել էր բարդ և յուրահատուկ իրավիճակ: Քաղաքական ազդեցության առումով շարունակում էին դոմինանտ մնալ ԱՄՆ-ն և Ռուսաստանը: Վրաստանն աջակցում էր ԱՄՆ-ի վարչակազմին և ոչ պակաս ակտիվությամբ հակամարտում Ռուսաստանի դեմ: ԵՄ-ի և ԱՄՆ-ի հարաբերությունները հարավկովկասյան մյուս երկրների՝ Հայաստանի և Ադրբեջանի հետ որոշ չափով փչացել էին ընտրական գործընթացներից հետո, որոնք նշանավորվել էին ընդդիմության նկատմամբ բռնաձևումներով և բազմաթիվ խախտումներով:

Ռուս-վրացական հնգօրյա պատերազմը լրջորեն փոխեց տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը: Այս պատերազմը Լիսաբոնի պայմանագրի կնքումից հետո առաջին լուրջ իրադարձությունն էր, որ ԵՄ-ի առջև խնդիր դրեց արագ և արդյունավետ գործարկել կառավարչական ինստիտուտներն արտաքին քաղաքականության ոլորտում: Այդ կոնֆլիկտը և դրան հաջորդած իրադարձությունները լուրջ մարտահրավեր էին Միության համար: Եվրոպական դիվանագետներն ու քաղաքական գործիչները ակտիվ մասնակցություն ունեցան ռազմական գործողությունների դադարեցման և դրան հաջորդած բանակցային գործընթացում:

ԵՄ-ի «փափուկ ուժի» կիրառումը տարածաշրջանում ակնհայտ դարձավ 2008թ. նոյեմբերին «Արևելյան գործընկերության» մեկնարկով: ԵՄ-ն սահմանեց նոր քաղաքական նշանող, որն արդյունք էր ստեղծված քաղաքական ձգնաժամի: Արդեն 2009թ. մայիսին ստորագրվեց համատեղ հռչակագիր «Արևելյան գործընկերության ծրագրի համատեղ իրականացման մասին»: Նույն թվականի դեկտեմբերին Եվրոպական խորհուրդը Բրյուսելում նախաձեռնեց Հարավային Կովկասի երկրների հետ ասոցացման համաձայնագրերի կնքման շուրջ բանակցություններ: 2010թ. մայիսի 10-ից համաձայնություն ձեռք բերվեց ասոցացման համաձայնագրերի կնքման վերաբերյալ[8]: Այդ գործընթացը շա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

րունակվում է մինչ օրս: Այդ շրջանում ԵՄ-ն աջակցում էր նաև Հայաստանի և Թուրքիայի միջև քաղաքական երկխոսությանը՝ «Ֆուտբոլային դիվանագիտության» շրջանակներում:

Անվտանգություն 2008-2014թթ. Հարավային Կովկասում ԵՄ-ի գործունեությունը, որը կարելի բնորոշել որպես «ակտիվ մերձեցման փուլ», պետք է նշել մի քանի հիմնարար փոփոխություններ՝ նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ: ԵՄ-ի դերի մեծացումը չսառեցված հակամարտությունների կարգավորման և միջազգային բանակցային գործընթացներում: Արդարության համար հարկ է նշել, որ դրան նպաստեց նաև Ռուսաստանի իշխանությունների համեմատաբար հանդուրժող արձագանքը:

- ԵՄ-ի «փափուկ ուժի» ամրապնդումը՝ հետպատերազմական Վրաստանի տնտեսության վերականգնման մեջ ունեցած ակտիվ դերակատարությամբ և «Արևելյան գործընկերության» ծրագրի մեկնարկով պայմանավորված:

- Տարածաշրջանում ԱՄՆ-ի դիրքերի թուլացումը և նախկին խորհրդային տարածքում Ռուսաստանի դիրքորոշման հստակեցումը:

- Տարածաշրջանի երկրների նկատմամբ «հավասար հարաբերությունների» սկզբունքի կիրառումը:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ, 2008թ-ից սկսած, ԵՄ-ի ազդեցությունը տարածաշրջանում զգալիորեն մեծացել է՝ հիմնականում էներգետիկ շահերով պայմանավորված: Հարավային Կովկասի տարածաշրջանը դիտարկելով որպես էներգետիկ անվտանգության համակարգի բաղկացուցիչ՝ Եվրոպական Միությունը մեծապես կարևորում է տարածաշրջանային հակամարտությունների խաղաղ ճանապարհով լուծումը, անվտանգության, կայունության և ժողովրդավարության ամրապնդումը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Sascha Tamm. Weakness as an opportunity: EU Policy in the South Caucasus. Working Paper, Germany, p. 3
2. Юматов К.В., Эволюция политики Европейского Союза на Южном Кавказе. Вестник местного государственного университета № 1(17), стр. 126-127
3. Marchel de Haas, Andrej Tibold, Vincent Cillesen. Geo-strategy in the South Caucasus: Power Play and Energy Security of States and Organisations. Clingendael Institute, November 2016, pp. 63-66
4. Mariam Dekanozishvili. The EU in the South Caucasus: By What means, To What Ends?. Georgian Foundation for Strategic and International Studies, Occasional Paper #2:2004, January 2004, pp. 27-29
5. George Mchedlishvili. Changing Perception of the West in the South Caucasus, Adoration No More. Russia and Eurasia Programme, February 2016, p. 16
6. Laure Delcour, Hubert Duhot. Bringing South Caucasus Close to Europe: Achievements and Challenges in ENP Implementation. College of Europe, Department of European Interdisciplinary Studies, March 2011, p. 5
7. Walski Krzysztof. The European Union's Eastern Neighbourhood: The Eastern Partnership as a Strategy of EU Engagement and Security. Penn McNair Research Journal, Volume 2/ Issue 1, Article 5, November 2010, pp. 11-13
8. Rakutiene Sima. The EU's Eastern Partnership as International Governance: What is the Role of the Civil Society? Vytautas Magnus University, Faculty of Political Science and Diplomacy, Lithuania, April 2014, pp. 51-53

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Եվրոպական Միության ռազմավարական շահերը Հարավային Կովկասում.
հարաբերությունների զարգացման դինամիկան
Տաթև Զորյան**

Հոդվածում քննարկվել են Հարավային Կովկասի հետ Եվրոպական Միության հարաբերությունների երկու՝ պասիվ և ակտիվ փուլերը, ԵՄ-ի ռազմավարական շահերի զարգացման դինամիկան, 2000-ականներից Միության քաղաքական օրակարգում Հարավային Կովկասի ձեռք բերած կարևորության ներքին և արտաքին պատճառները: Ինչպես նաև քննարկվել է Հարավային Կովկասի դերը Եվրոպական Միության էներգետիկ ռազմավարության և տարածաշրջանում վերջինիս քաղաքական ազդեցության ամրապնդման տեսանկյունից:

РЕЗЮМЕ

**Стратегические интересы Европейского Союза в Южном Кавказе:
динамика развития отношений
Татев Зорян**

Ключевые слова: Европейский Союз, Южный Кавказ, стратегические интересы, двусторонние отношения, политический кризис, мягкая сила, региональная безопасность.

В статье рассмотрены активные и пассивные этапы взаимоотношений Европейского Союза с Южным Кавказом, динамика развития интересов ЕС, внешние и внутренние причины преобретения актуальности Южного Кавказа в политической повестке ЕС с начала XXI века. Также рассмотрена роль Южного Кавказа в энергетической стратегии ЕС в контексте / укрепления политического влияния в регионе.

SUMMARY

**The EU's Strategic Interests in the South Caucasus:
The dynamics of the development of relations
Tatev Zoryan**

Keywords: European Union, South Caucasus, strategic interests, bilateral relations, political crisis, soft power, regional security

The article discusses both passive and active phases of European Union's relations with the South Caucasus, the dynamics of the European Union's strategic interests in the field of security, main internal and external factors of the increased importance of the South Caucasus region in the EU's political agenda in the beginning of the XXI century. It also considers the role of the South Caucasus in the context of European Union's energy strategy and increasing political influence in the region.